

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Լեոնային Ղարաբաղի Հանրապետության անկախության օրվա առթիվ

01.09.2016



Միրելի արցախցիներ,

Քարոդդ դար է անցել այն օրից, երբ Արցախի Հանրապետությունը հռչակվեց անկախ պետություն: Սեպտեմբերի 2-ը համահայկական և համազգային տոն է, քանի որ 25 տարի առաջ միավորվեցին Հայաստանի, Արցախի և Միյուռքի հայրողիների ուժը՝ ազատ ու անկախ պետություն ունենալու արդար պահանջով: Պայքարեց համայն հայությունը, կռվեց կողք-կողքի և հաղթեց՝ սկիզբ դնելով արցախահայության երազանքի իրագործմանը: Ապրիլ ամսին Արցախի Հանրապետության սահմանին ծավալված դեպքերը ապացուցեցին, որ Արցախ աշխարհը անառիկ է, քանզի նրա ժողովրդի և հողի պաշտպանության համար կանգնած է ողջ հայությունը: Մեր անձևներ ու հերոս հայրողները կյանքի ու մահվան պայքար մղեցին՝ պաշտպանելով իրենց հայրենակիցների օջախները:

Միրելի հայրենակիցներ,

Սեպտեմբեր ամիսը հայ ժողովրդի համար յուրօրինակ արժեք ունի: Օրեր անց մենք տոնելու ենք Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձը: Պատահական չէ, որ մեր անկախ ու ազատ պետությունների կարևորագույն տոները նշվում են միևնույն ժամանակ: Սա ևս մեկ ապացույց է, որ 1991 թվականին ծավալված համահայկական, համազգային պայքարի գաղափարներն ու նպատակները արդար են ու ճշմարիտ:

Միրելի արցախցիներ,

Կրկին շնորհավորում եմ այս կարևորագույն պետական տոնի կապակցությամբ՝ մեջբերելով Գարեգին Նժդեհի խոսքերը. „Ուժեղինն է աշխարհը, հայրենիքը, ազատությունը և ամեն ինչ,,: Արցախ աշխարհին ցանկանում եմ ուժ, կորով, խաղաղություն և բարեկեցություն: